

ԿՐՕՆԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ

« Եւ Նոր պարտ է գործել
զգործս այնորիկ, որ առաքեացն զիս,
մինչ առարն կայ, գայ գիշերն,
յորժամ ոչ ոք կարէ գործել »

(Յուլ. Թ. 4)

Տարւոյս 1994 թուականի 365 օրերը իրենց լրումին հասան, ահաւասիկ կանգնած ենք Նոր տարւոյ սեմին:

Զանազան հասարակութեանց մէջ, սովորութիւն դարձած է կերուխումով ողջունել Նոր Տարին: Քրիստոնեային համար Նոր Տարուան օրը զուարճութեան, ուրախութեան եւ վայելի պահ մը ըլլալէ աւելի պէտք է ըլլայ աղօթքի եւ հաշտեցումութեան օր մը: Եթէ յետագարձ ակնարկ մը նետենք մեր մէկ տարուան վարած կեանքին վրայ, երեսն հազարէն ենք մեր դրական կողմերը եւ մատնանշելու՝ մեր թերիւնքը: Երբ տեսնենք թէ անցնող տարուան մեր գործունէութիւնը յաջող արդիւնք տուած է, այսինքն բարի գործերով օժանդակած ենք մեր ազգային-եկեղեցական կեանքի բարգաւաճման, սատարած հայկական մշակոյթի զարգացման ու տարածման եւ բարձր պահած ընկերութեան բարոյականը, այն առնել, որպէս ճշմարիտ քրիստոնեայ, իրաւունք կ'ունենանք ուրախութեամբ ողջունելու Նոր Տարին: Սակայն երբեք պէտք չէ յուսահատիլ երբ մեր թերութիւնները նժարին ծանր կշռող կողմը ըլլան: Նոր Տարուան այս օրը առիթ թող ըլլայ զանոնք ուղղելու եւ սկսելու նոր կեանք մը՝ համաձայն Քրիստոսի ուսուցումներուն: Դաս առնենք մեր ձախորդութիւններէն, որպէս զի անոնց միջոցաւ ապահովենք մեր ապագայի յաջողութիւնը: Նախօրէն պատերազմ

կորսնցնել ետք ըսած է իր զօրավարներուն.- «Թշնամին թեւ յաղթեց, բայց միւս կողմէ իրեն վրայ յաջորդ անգամ յաղթանակ տանելու կերպը ինծի սորուեցուց»: Կեանքի պայքարէն յաղթական դուրս գալու համար, յոյսով եւ հաւատով հետապնդենք մեր գործը: Մեզմէ իւրաքանչիւրս գործ մը, պարտականութիւն մը ունի կատարելիք կեանքի տարբեր շրջաններու մէջ. շրջաններ՝ որոնց մէջէն անգամ մը միայն պիտի անցնինք.- «Գործածէ ժամանակը», կ'ըսէ հեղինակ մը, «եթէ կը գնահատես յաւիտեանականութեան արժէքը: Երէկը չես կրնար ետ քերել, վաղուան վրայ չես կրնար վստահիլ, այս օրը միայն ինչպէս է, գործէ չօգտագործես» կը կորսնցնես, եւ ինչ որ կը կորսուի՝ յաւիտեան կորսուած է»:

Այսօրերն են սկսեալ ուխտենք լաւապէս օգտագործել յաւելտ անհետացող ժամանակը, մեր օրերը անցընենք Աստուածահաճոյ եւ մարդասիրական գործերով, ընտանեկան յարկերէ ներս հայեցի դաստիարակութիւն տանք մեր մատաղ ու նոր սերունդին, եւ մանաւանդ պահենք մեր ազգային-եկեղեցական աւանդութիւններն ու դիմագիծը, քանի ժամանակը ուշ չէ, այլապէս մեր առջեւ բացուող տարեշրջանը քայլ մը եւս առաջ կը տանի մեզ դէպի ուծացում, դէպի ապագայ-նացում, քանի որ «գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել»:

ՌՈՒԻԲԷՆ ՎՐԻ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ